**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 30-ը մարտի 2018թ.
Ժամը $12^{00}$

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական բաժնի երկրատեղեկատվական և պլանավորման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ս.Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Միքայելյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:
Նիստին ներկա չէր ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1. Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրեն համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Բաղդասարյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ մասնավորապես.
- **«Գլոբալգիս» ՍՊԸ-ն** ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են՝ Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր և օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin): Երաշխիքային սպասարկում՝ առնվազն 365 օրը, ինչպես նաև բացակայում են նմանատիպ պայմանագրերը: Անհրաժեշտ է ներկայացնել լիարժեք տեխնիկական բնութագրերը և նմանատիպ պայմանագրերը: /առկա է մասնագիտական եզրակացություն 04.04.2018թ./ կցվում է/:
- **«Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն** բացակայում է հրավերով նախատեսված հավելված 6.1-ը և համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության Ձեր հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը:
Սահմանված ժամկետում «Գլոբալգիս» ՍՊԸ-ն և «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն շտկել են իրենց անհամապատասխանությունները:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 **12.04.2018թ**. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև **12.04.2018թ**. տրված մասնագիտական եզրակացությունը/կցվում է/՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցներին որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջինիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել ««Գլոբալգիս» ՍՊԸև «Ինտերգեոտէկ» ՍՊԸ -ներին:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ.Բաղդասարյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Գնահատող** | | Տ. Մաթևոսյան |
| **Գնահատող** | | Ս. Պետրոսյան |
| **Գնահատող** | | Հ. Բարսեղյան |
| **Գնահատող** | | Ա.Միքայելյան |
| **Գնումները համակարգող՝** | | Տ. Բաղդասարյան |